

ւորովթիւն են կրում և ժաղսվածուի հրատարակիչը կարող է տարակուածել, արդեօք հարկաւոր էլ կ'լինի այնպիսիներն էլ հրատարակել։ Մի բան հարկաւոր է առանձին կերպով շեշտել, ներսիսի կոնդակները՝ ամենաաննշաններն էլ իր գրածներն են, նա կոնդակագիր չէ ունեցել, ինըը սեը գրել և շատ անդամ էլ ինքն է արտագրել՝ գրագրի պաշտօն կատարելով։ Մի կոնդակի մէջ (№ 498) նա գանդաւում է էջմիածնի աղքատութեան, վարդապետների տղիտութեան և Սինօդի անզօրութեան մասին, ասելով, մինչ ամենայն Հայոց կաթողիկոսը ստիպուած է գրագրի պաշտօնն անդամ վարել, Սինօդի անդամները ոչ մէայն իրանք թղթերը չեն դրում, զլանում էլ են կարդալ առենադպրի գրածը և ստորագրում են կարեւոր թերթերն առանց կարդալու։ Այսուղից պարզ է, որ ով գործ ունենայ ներսիսի թղթերի հետ, համազուած պիտի լինի, որ ամենաաննշան թղթի իւրաքանչիւր տողը ներսիսի գրչի մոքի արտագրութիւնն է։

Մհերով վարդապետ



Տ Ա Ճ Կ Ա Հ Ա Յ Փ

Աղքամարի թեմը. Այս ընդարձակ կաթուղիկոսական թեմի կրթական խիստ ողբարի գըութեան ցաւալի հետեւանքներից մէկը մատնանշող հետեւեալ գըութիւնն ենք կարդում «Յուր հանդակի» մէջ։

Ամենայ ամերելեան միսիոնարներու որբանոցին ընթացաւարտ եղող աղաք իրենց դիւզերը վերագառնալով, ոմանք քարոզութիւն և ոմանք ուսուցչութիւն կընեն և անհամացնութեան առելթ կըլլան բաղաքականամիտ գաղափարներով։ Այս աղաք իրենց ամսականներուն դիմաւոր մասը կը ստանան միսիոնարներէն և տեղ տեղ ալ զիւզացիներուն առւած հացահատիկներով կը բաւականանան։ Աղթամարայ կաթուղիկոսական

տեղապահ Տ. Արտէն վե ուղեր է համաձայնութեան մը դալ
միսիսնարներուն հետ և իր կողմէ ներկայացուցել է նշանա-
կած երեք անձերու միջոցաւ բանակցութիւններ կատարելով,
վերջապէս համաձայնութեան գիր մը ստորագրուեր է երկու
կողմէն: Այս գիրը Ս. Պատրիարքին պիտի զրկուի վաւերացնե-
լու համար և ապա դորժադրութեան պիտի տրուի, և այս հա-
մաձայնագրին համեմատ միսիսնարներու որբանոցին մէջ ասկէ
վերջը գաս պիտի տրուին նաև Հայ. եկեղեցական պատմու-
թիւնն, եկեղեցւոյ դաւանանքը և երաժշտութիւնը: Ըսթացա-
ւաբա տղարը աեզւոյն առաջնորդարանին մէջ պիտի քննուին
և ապա պաշտօնի պիտի կոչուին, միայն ուսուցչութեան պա-
րագելու համար: Այս տեսակ ուսուցիչներ իրենց ամսականը
պիտի ստանան գլխաւորապէս միսիսնարներէն և մաս մըն ալ
Աղթամարէ ու գիւղերէ եղած վճարումներով: Երջուն տեսուչ մը
և մնայուն ժողով մը պիտի հսկին այս ուսուցիչներու վրայ:
Ժողովին անգամներուն կէսը կաթողիկոսական տեղապահին
կողմէ պիտի նշանակուե՛ մէկը եկեղեցական ըլլալու պայմանով,
իսկ մնացեալ կէսը միսիսնարութեան կողմէ պիտի նշանակուի:
Կըսուի թէ: Երբ այս համաձայնութիւնը գործնականապէս իրա-
կանանայ, կարդ մը անհաճոյ ընթացքներ վերջ պիտի դտնեն:

Այս նկարագրութիւնից յետոյ խմբագրութիւնը հետեւալ
իրաւացի գիտողութիւններն է անում. — Մենք այս մասին բան մը
ըսելէ առաջ պէտք ունինք աեսնելու պատրաստուած համաձայ-
նութեան գիրն: Եթէ Աղթամարայ և թեմերուն համար, ուսու-
ցիչներու պէտք կայ, անշուշտ չի վնտուուիր, որ ասոնք մասնա-
գէտներ ըլլան, այլ պարզ ուսում ունեցազ անձեր. ինչո՞ւ համար
այդ ուսուցիչները չպատրաստուին տեղւոյն (Վանայ) կեղընա-
կան վարժարանին, հայկական որբանոցին և մանաւանդ Աղթամարի
վանեին մեջ եթէ տեղւոյն կեղընական վարժարանը և որբա-
նոցը շրջակայ գիւղերու ուսուցիչ ալ չի կրնար հասցնել, ինչո՞ւ
համար ուրեմն ատոնց գրուատիքը կընենք թերթերու մէջ,
պէտք կայ ամիրեկեան որբանոցի ընթացաւարտները անպատ-
ճառ դորժածելու, որպէս զի այս կերպով համաձայնութիւն-
ներ անհրաժեշտ ըլլան: Մենք աեղական պայմանները շատ մօ-
տէն չենք գիտեր, սակայն կը մտածենք, թէ աւելի լաւ չէր ըլ-
լար, որ Աղթամարէ մէջ դանուող կարդ մը դատարկապորտ
մարդեզ իրենց թեմին պէտք եղած ուսուցիչները պատրաստե-
լով զբաղէին, քան թէ անօգուտ գործերով:

Վանայ թեմը, նման քարոյական և կրթական անմիսիթա-
րական նկարագրութիւններ դանում ենք և ուրեշ վայրերի

Նկատմամբ, որոնք յաճախ մարդուս անհաւատալի են թւում:

«Փունջի» մէջ մի նամակ կայ Արծիկ գաւռափից, որի մէջ կարդում ենք.

— Այժմ 17 անձինք կան, որ երկերկու կին ունին ողջ, մէկը կայ, որ երեք կին ունի, վեց հոգի կան, որ ապօքինի կը կենակցեն, զոր օրինակ՝ իրենց հօրեղուոր աղջիկը իբրև ամուսին կը գործածեն առանց ամաչելու:

Բարոյականութիւնն ու բարքերը խանդարեալ են խապառ: Ս. Աքանչելագործ վանուց հոդաբարձու ու ժողովոյ անգամ եղող անձը կը ժողոհի օրինագանցութիւն ընել . . . իւր աղջկան տագեր աղջիկն իւր որդւոյն համար իբրև ամուսին բերել և առանց պատկի պահել իւր տան մէջ: Երկու աղդայինք կոյս աղջիկներ, առանց պատկի խորհուրդ կատարել տալու՝ մէկ երկու տարեկ և վեր իրենց տունը ըերած էին, անոնց հետ ապօրինի կենակցած և զաւակ ալ ունեցած էին: Տ. Մակար հայրը խղճի մաօք քննելով՝ սոյն բարեկենդանի օրերը, պատկել տուաւ ըստ օրինի և գայթակղութիւնը մէջ տեղէն վերցուց: Գաւառակին հայոց մէջ կրօնական ու քաղաքական ժողովներ կազմակերպուած չեն և սկզբանէ անտի: Թէ ժողովուրդն և թէ վանքը ոմանց հաճոյից խաղալիք եղեր են: Գիւղօրէից մէջ վարժարան չկայ. նոր սերունդն ու իրիտասարգութիւնը խսպառ զուրկ են դաստիարակութենէ: Վ. Երջապէս՝ Գաւառակիս հայերն կը ունաւ կան, բարոյական ու մտաւորական տեսակէտով շատ աննախանձելի և յետագիմական գրութեան մէջ կը գտնուին այժմ:

Այս գոււառն էլ Վանայ Տ. Սահակ եպիսկոպոսի առաջնորդական թեմումն է:

Կեսարիայի քեմք. Կ. Պոլսից հետ ու դանուող թեմերի անսախանձելիութեան հակառակ՝ աւելի մօտիկ թեմերի մէջ երբեմն պատահում ենք մխիթարական երևոյթների: Օրինակ Կեսարիոյ Առաջնորդ Տ. Տրդատ եպիսկոպոսի ջանքերով գլուխ է եկել մի գեղեցիկ դոք: Ահա թէ ինչ է գրում այդ մասին ՈՒլուզանգիսնը—Ալսնդակցենք Գեր. Տ. Տրդատ եպս, Պալեանի յաջողապէս ի գլուխ հանելուն համար Ա. Կարտապետ վանքին յարակից գիշերօթիկ կրթարանի շենքը, որով Կեսարիոյ վիճակն սժառած եղաւ յոյժ կարեռ հաստատութեամբ մը, և աւեական հիմերու վրայ գրած եղաւ միջնակարդ ուսումը Փոքր Ասիոյ այն բազմամարդ կեդրոնին մէջ: Ենոքհիւ այս հիմնարկութեան, Կեսարիոյ և շրջակայից համար արժանաւոր ուսուցիչն երու, քահանաներու և կղերցուներու հայթայթումը կապահավուի, և արդէն Տ. Տրդատ Սրբաղանի հասուցած աշակերտներուն մէջ

կան ո՛չ միայն սոյնպիսի բարոյական մշտիներ, այլ և խոստմնալից բժիշկներ, որոց պատրաստութեան մեծ դեւրութիւն կը նծայէ Պէրութիւնամալսորանը (!!), ուր գիւրաւ կը յաճախեն հետարիոյ ընթացաւարաք: Յարոյական հաստատութիւնն իր պառզները տուած էր արդէն, կմնար նիւթական շէնքն յարմարցնել իր վոեմ նպատակին, և տպագայ ընդարձակման և յառաջացման միջոցները գիւրացնել, և այս այլ կը յաջողի ն. Սրբազնութեան, շնորհիւ նոր շէնքին, որ ամեն կերպով համապատասխան է նպատակին: Եթէկ սուացանք նորակառոյց կը թարանին մեծադիր լուսանկարը և շատ ուրախ եղանք տեսնելով, որ շէնքին գիւրքը, ընդարձակութիւնն և բաժանումները վեովին կը համապատասխանեն ոկզչնական յատակածնեն, այնպէս որ նորին Սրբազնութիւն միջոցներու անձեռնութեան պատճառով իր նախկին գաղափարը կրնատելու հորկին ներքեւ չէ դանուած Ա. Կարապետի վանքն արդէն շատ բարձր, գեղեցիկ, հաստատուն, ամուր և օդասուն զիրք մոււնի, և անսր յարակից շինուած կը թարանք ճարտարագետութեան նոր ոճով, առողջապահ սկան ամեն պարմանները կներկայացնէ, և տեղ վաստակելու ճգնեմ հաշեւներէն զերծ ըլլալով, բարեջան առաջնորդը կարող եղածէ միջոց, տեղ և օդ լիուլի պարզեել իր ներկայ և ապագայ աշակերտներուն: Վարժարանն իր դաստիաններով, իր ննջարաններով, ուսուցաց սենեակներով, զծազրատնով, զեղարանով, հիւրանցով, սեղանութունով, խոհանոցով, մառանով: Լուսացարանով, զռնապանի սենեակով, և նշանապատւած է իր սեփական ըակավ և վանքին հին և ընդարձակ ու գեղեցիկ պարագանով, ամենքն հաստատուն պատերումէջ: Տրդատ Սրբազնին հետ պէտք է շնորհաւորենք նաև կեսարացի կը թառէր ազգայիններուն՝ այսպիսի զովելի գործ մը և զլուխ հանելու միջոցներն ընծայելուն համար ն. Գերապատւութեան, որ իր առաջնորդական ու վանահայրական պաշտօնավարութեան երկարութեամբն ալ Փոքը Ասիոյ մէկ ծայրէն միւսը մեր առաջնորդներուն ու վանահայրերուն մէջ ամենէն գնահատելին և ամենէն արդիւնաւ որ կը ներկայանայ իրաւումք:

Ե՞նչքան ցանկալի կը լինէր, որ կնսարիան բացառութիւն մինէր և միւս թեմերն ևս կարողանային իրենց ըազմաթիւ վանքերից մէկի մէջ հաստատել այսպիսի թեմական—միջնակարգ պարոցներ վանքերի միացեալ ձեռնատուութեամբ:

Բուլղարիոյ թեմը. Անցեալ համարներից մէկում յիշտակել էնք և, Պոլոյ պատրիարքարանի յաջողութիւնը Բուլղարիոյ թեմի համար առաջնորդ ընտրել տալու նկատմամբ, ըստց

մինչև այժմ գժւախտաբար ընտրելին իւր պաշտօնին չէ զնացել, պատճառը թէ ու չէ գրւում Պօլսի թերթերի մէջ։ սակայն հաւանաբէն թիւրք կառավարութեան յարուցած խոնդուաները կը լինին արգելառիթ։ Այդ մասին կարդում ենք «Բիւզանդիոնում»։ Բուլղարիոյ առաջնորդական գործոց համար կազմուած յանձնախմբին նախագահ Տ. Յովհան քահանայ Մանդակունի անցեալ Դ. այցելութիւն առլով Սովիայի Օմանեան Քոմիտէ Վ. ունեմ։ Ուի Ֆերուս պէյի, խնդական թիւրքիւն յայտներ է անոր ապաքինման առթիւ եւ կրկներ է իր խնդիրը նորբետիր առաջնորդին իր պատօնավայրը դրիելու մասին։ Ն. Վ. սեմութիւն պատասխանած է, թէ հարկ եղածը գրած է Բ. Գուռու։ Վ. առնացի, Շումլայի, Ռուսմուգի, Ֆերուս պէյի մէջ թաղական կամ հոգաբարձական մարմնոց ընտրութեան փոփոխութեան վէճներն այն առտիճան յառաջ գացած են, որ տեղական օտար թերթերն իսկ խիստ բառերով կը քննագատեն և կառավարութեան պաշտօնեայք ալ ցաւ յայտնած են։ Այս վիճակին առջե յանձնաժողովը կինոգը Պատրիարքարանէն, որ Ա. Զատկի առթիւ Բուլղարիոյ առաջնորդին մեկնումը կարելի ըլլայ, Ենչպէս որ տեղական պէտքերը կպահանջեն։

Մոյ թեմը. — Մուշէն Պատրիարքարան գրուած գիր մը տեղւոյն աղջկանց որբանոցը կարօտ վիճակի մէջ կը ներկայացնէ, որովհեաւ ոչ միայն պարտքերը երթալով կը շատնան, այլ և առօրեայ ոնունդն ալ հոգալու համար գրամ կը պակսի։ Հետեւաբար խնդըեր են, որ յետնեալ ամսականները (Պատրիարքարանից նշանակուած նպաստը) շուտով զբկուեն։ Այսակ (Պօլսում) գիտել կը տրուի սակայն, թէ Պատրիարքարանը ամսէ ամիս բարոր գաւառու նպաստընկալ վարժարաններու ամսականները կանոնաւորաբար զրկած է ու կը զրկէ։

Բարեգործութիւններ. — Թորոս Էֆ. Բարաղամեան փափաքելով իւր ծննդավայրին Խասդիւղի՝ ազդ. Ա. Ներօխուեան վարժարանին, որ խարխուլ վիճակմ առած է, և ուր աշակերտած և պատանեկութեան օրերն անցուցած է Ենք, նպաստ մ՝ ընել կտակաղբով մը, խնդըած է Ա. Պատրիարքէն որ Թէլեան և Խաչատուրեան էֆ. Ներուն յանձնարարէ կազմել այս կտակաղիք։ Ն. Սըբազնութեան հրամանով Պատրիարքարանի երկու համակելի գիւանապետները պատրաստեցին կտակաղիքը, զոր Բարաղամեան էֆ. Եներկայութեան վկայից ստորագրեց սիքայօժար, որով գիտակէ 1500 լիրա (մօտ 14,000 ը.) ներսիսեան վարժարանին ի հիմանէ կառուցման համար։

— Նիւ Եօրքէն 80 Օմ. ուկի զրկուած է որբանոցներու համար։

— Զաքար Էֆ., Գրիգորեան անցեալ շաբաթ օր կնքեց մահկանացուն և հետևեալ օրը կտարուեցաւ յուղարկուորութեան հանդէոը Սամաթիոյ Ա. Գէորգ Եկեղեցւոյ մէջ։ Զաքս քարուկիր, մէկ վայտաշէն տուն և դետին կտակած է Հիւանդանոցի, Երուսաղէմի, Գալֆայեան որբանոցի, և Սամաթիոյ, Պալաթի, Եյռապի ու Գասըմիաշայի աղքատամինամներու համար։ — Կալուածներն 2000 լիրայի չափ կարժեն։

— Էպրասէն կը գրեն «Մանզումէի»։ Տեղւոյ վարժարանը, որ տնտեռապէս ըաւական կանոնաւոր վիճակ մը սատացած է՝ հիմա շնորհիւ աեզւոյս աղդայիններէն Յովհաննէս Էֆ։ Տարբեաննի, որ Եկեղեցին գետնին վըայ ըաւական խոշոր ըան մը շնել տուալ՝ մօտ 400 սոկիի ծախըով։ Նէնքը գեռ կը շարունակուի շնուրել և եթէ աւարտի, տարեկան 75 սոկիի մօտ հասոյթ մը պիտի աւելնայ վարժարանին տարեկան պիւտմէին վերաց։

«Արարտաի» անցեալ համացներից մէկում մատնանիշ արինք նուժանիոյ հայ գաղթականութեան բարօյական — կոթական անմիտարական դրութիւնը, ուս աղդային կալուածների Եկամուտը մի քանի անազնիւ հոգաբարձուների դրականն է մանուժ փոխանակ իւր նպատակին ծառայելու։ Խոկ մինչև այժմ եղած դպրոցի շնուրթիւնն էլ հետեւեալ կերպով են շահագոյնութում։

Առւժանիոյ Թօման քաղոքի հայոց Եկեղեցին հոգաբարձութիւնը տեղւոյն հայ վարժարանիր փակել եւ նախակառուն ու նիւթագրատուն ըլլալու պայմանու վազձու տուեր է։

ԱՅԼ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ՕՐՅՈՒԹՈՒՄ ԵԿԵՂԵՑԻ

Այր. Վետանք թերթը նկարագրում է մի քանի ճարտիկի ուուների ստոր շահանագրական ձեռնարկութիւնները, ուը ուր 1900 թուի թօման կոկերական կոկեւների վերաբերեալ պատկերները ուկել են վաճառել իրք ներկայ պատերազմի նկարագրիւմ՝ միամիտ ժողովրդի գառն աշխատանքով վաստակած կոպէկները կորզելու Ցիշելով այդ անարդ խաթերայութիւնը, իրաւացի արտունջ է